դատողն ոչ ետ պատասխան դատախազիս և ոչ բանիւ և ոչ գործօք մխիթարեաց, և քղամիտն այն անկեալ մնաց և կայ մինչև ցայսօր, յետ լրումն ժամանակին պայմանին վաշխապարտին իմոյ դանգատողն սկսեաց յորդորել դատախազիս առ 'ի հատուցում թղթոյն ձեռնադրեցելոյն վաշխապարտութեան իմոյ, այս դատախազս խոստացաւ դանգատողին հատուցանել 180 ղուռուշն վաշխիւն անցելոյ ժամանակին, եթէ դանգատողն յետս դարձուցէ ինձան յանդիմանողիս 30 դահեկան երծաթն, որ 'ի պատճառէ կաղանալոյ իւրոյ և 'ի հարկաւոր ժամանակի ոչ առաքելոյ քղամիտն, և դանգատողն ոչ հաւանելով բանից դատախազիս եմուծ գանգատն իւր 'ի պատուելի յապարանս Ջանալով եթէ կարի անիրաւասցի 'ի վերայ այս դատախազիս։

Այլ արդ դատախազս պատրաստէ հատուցանել պարտն իւր հարիւր և ութսուն ղուռուշ հանդերձ վաշխիւն, որ վերաբերէ առ այնմ, եթէ դանգատողն յետս դարձուցանէ ինձան դատախազիս երեսուն դահեկան երծաթն հայոց հանդերձ թղթաւ վաշխապարտութեան իմոյ, և դատախազս ակն ունի 'ի արդարութենէ պատուելի յապարանի, որ 'ի մէջ մտաց իւրեանց երկայնամիտ լիցեն, զի անիրաւութիւն 'ի դանգատողէ ծնեցաւ, և հրաման տայցեն որ զամենայն զոր ինչ ծախ դատաստանի եթէ 'ի դանգատողէ և